ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1684-Ա « 08 » մայիսի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 04.03.2024 թվականին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-24/13» ծածկագրով Երևան քաղաքում մետաղական ճաղավանդակների ձեռքբերման և տեղադրման ընթացակարգին հայտեր ներկայացրած «Բագրատունի» Ա/Կ-ն (արտադրական կոոպերատիվ), «ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերությունը և «ՌՈԱԴԲԻԼԴԻՆԳ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակիցներ) խախտել են գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այն է՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 29.03.2024 թվականին Մասնակիցներին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված հետևյալ անհամապատասխանությունները.

«ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը ներկայացված էր թերի՝ ոչ ամբողջական: Թիվ 1 հավելվածում սխալ էր նշված ընթացակարգի ծածկագիրը, իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը թերի էր նշված, հասանելի չէր: «ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերության տնօրենի կողմից Ա. Ստեփանյանին տրված լիազորագիրը նախատեսված էր 2023 թվականի համար: Ծավալաթերթ-նախահաշվում նշված ճաղավանդակների քանակը և միավոր արժեքը հաշվարկված էր սխալ, անհրաժեշտ էր շտկել և համապատասխանեցնել գնային առաջարկի ընդհանուր գինը սյունակում նշված թվին:

«ՌՈԱԴԲԻԼԴԻՆԳ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը ներկայացված էր թերի՝ ոչ ամբողջական: Ծավալաթերթ-նախահաշվում նշված ճաղավանդակների քանակը և միավոր արժեքը հաշվարկված էր սխալ, անհրաժեշտ էր շտկել և համապատասխանեցնել գնային առաջարկի ընդհանուր գինը սյունակում նշված թվին:

«Բագրատունի» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր ծավալաթերթ-նախահաշիվը:

Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասնակի, այն է.

«Բագրատունի» Ա/Կ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ տողում ծավալը և միավորի արժեքը սյունակներում նշված թվերի արտադրյալը սխալ էր հաշվարկված, ինչի արդյունքում ծավալաթերթ-նախահաշվի ընդամենը տողի գումարը սխալ էր հաշվարկված:

«ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերության կողմից ներկայացված շտկված ծավալաթերթ-նախահաշվում կրկին առկա էր թվաբանական անճշտություն, մասնավորապես, ծավալաթերթ-նախահաշվի ընդամենը տողում նշված գնի և ԱԱՀ-ի գումարը չէր համապատասխանում ընդամենը տողում նշված գումարին, «44.397» փոխարեն պետք է նշված լիներ «44.398», ինչպես նաև ընդամենը տողում նշված ճաղավանդակների քանակի և միավորի արժեքի արտադրյալը ճշգրիտ հաշվարկված չէր:

«ՌՈԱԴԲԻԼԴԻՆԳ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից թիվ 1.1 հավելվածը կրկին թերի էր ներկայացված՝ ոչ ամբողջական:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ վերոնշյալ Մասնակիցների հայտերը գնահատել է անբավարար և մերժել է:

Կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը 02.05.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Բագրատունի» Ա/Կ-ին, «ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերությանը և «ՌՈԱԴԲԻԼԴԻՆԳ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ